



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



5  
Ltn  
895



Zurück  
Zurück

1999





Հայրենի հասակ օրհանգիստ  
4895

ՊԼՏՄՈՒԹՒՒՆ ԵՒ ՊԼՏՃԱՌՔ

# ՎՆԲԵԳԵՐՁԻ

ԵՐԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԱՅ ՀԱՅՈՑ


ՍԱՐԳՍԻ ԳԱՐԲԻԷԼԻ ԵՒ ԱՄԲՐ-  
ՐՈՍԵԱՅ

ԸՆԴ ՀՈՎ ԱՆԵԱԻ

Հայրենի

ԼՈՒՍԿՈՐԶԱԿԱՆՍՈՒՐԻ ԱԹՈՒՈՑ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՅԻՈՑ



2612

Կեօն տարադրեալ

Չե Բաշեշե

Դ 1857 ամի  
Դ ԹԻՓԼԻՑ

Դ Տպագրատան Հոգևոր դպրոցի Հայոց ընծա-  
յից յԵրևանի Գեորգոս Արքեպիսկոպոսի

**ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ**

съ тѣмъ чтобы по напечатаніи представлено  
было въ Ценсурный Комитетъ узаконенное чис-  
ло экземпляровъ. Тифлисъ. 4го Апрѣля 1857  
года.

*Ценсоръ Кайтмазовъ.*

28. 897

4 895-60

# Ծ ԱՆՈՒՑՈՒՄՆ՝

Ընթերցողք, կարծեմ, շատ անգամ կարգ  
դացել կամ լսելք ճշմարիտ պատմութեանց և  
կեղծեալ հեքեաթներն կամ բժանների մէջ՝ էն  
պիսի որդւոց պատմութիւններ, որոնք կամ ի  
րանց անփորձ հասակի ազգեցութեամբը, և կամ  
խաբերայ ընկերաց և կարծեալ բարեկատուաց խոր  
հրդովը՝ մտքերը դնում են իրանց հայրենի աշխար  
հը, իրանց տուն ու տեղը, իրանց ծնողներին,  
իրանց սրտի սիրեկաններին, իրանց ազգականներին  
և բարեկամներին թողնել և օտար երկիր գնալ և  
Ողորմելի ծնողքը աշխարհք տեսած, գլխներին  
չար ու բարի անցկացած, օտարութեան վշտերին  
տեղեակ, հայրենի աշխարհի օրհնած հողին ու ջրին  
ճանօթ՝ սկսում են իրանց որդւոց դիտաւորութիւնը  
փոխելու համար հազար ու մէկ հնարքներ բանեց  
նել, խրատում են, աղաչում են երկինք ու եր  
կիր վկայ են կանչում, որ նրանց բռնած ճանա  
պարհը մոլոր է, բայց չ'ի ղուր, քամին մտելի  
նրանց գլխները, խորթ հայրը և հայրենիքը հարա  
զատից գերազանց են համարում, օտարների մե  
ծութիւնը և փառքը նրանց աչքերը կապելի և  
հեռու տեղերի հարստութեան համբաւը ական  
ջները խլացրել է, ոչ'ինչ բան չ'է ազգում և  
ոչ հօրերի ալիքներին են խնայում, ոչ մօրերի  
աղի արտասուկներին, մտքները դրել են, պէտ  
քէ կատարեն, Սերճապէս գալիս է հասնում է էն  
ցաւալի օրը և ժամը, որ մոլորեալ որդիքը պէտ  
քէ ջոկվին իրանց ծնողքներից և ազգականներից  
ոչ էն ինչ սե ու մութ օրէ, ծնողքը աղիկէզ  
մորմոքելով փաթթում են իրանց որդւոց վզովը,  
անյագ համբուրում են և ակամայ կամօք, ողբով

և սպով ուղևորում են նրանց: Այսպիսի եղևրական  
 հանդէսներ աչքներէդ առաջը նկարագրելով՝ դուք  
 էլ, ընթերցողք, շատ արտասուներ թափած կ'ըլ-  
 նիք: Բայց փոքր ինչ համբերեցէք, էլ ի արտասուներ  
 թափելու տեղ ունենք: Աս բաղդախնդիր ե-  
 րեաասարգները դնացին իրանք էլ չգիտեն ո՛ր  
 ծնողքը գիշերը անքուն, ցերեկը անհանգիստ,  
 յոյսերը առ Աստուած դրած, լացով ու թացով  
 սպասում են իրանց որդիեղանց վերադարձին: Ամ  
 եկաւ որներից խորար են հարցնում. բայց աւաղ լու-  
 բերը լաւ չ'են, վերադառնալու քաղցը տեղեկուեց  
 փոխանակ նրանց թշուառութեան համբուն են  
 ընդունում, և օրքան ցօր ալիխորով մորմարվում են:  
 Տարիներ են անցկենում, դարեր են շուռ գալի,  
 ծնողքները իրանց որդուց կարօտուլը հալումաշ են  
 րլում իսկ որդիքը իրանց ակնկալութիւններին ո՛չ  
 մինի կատարումը չ'տեսած, ունեցածներն էլ կորց-  
 րած՝ շատ նեղացած են, միայն մարդկային ամօթով,  
 ոմանք էլ յամառութեամբ տանում են անչափ նա-  
 խատիւքները և վատերը: Արքայական դանակը  
 տիրին է հասնում, էս օտարութիւն գնացու-  
 ներից ոմանք հեռու են դնում սնտոխ ամօթը,  
 մտքերն են բերում իրանց հայրենի երկրի սա-  
 կաւապէտ և պարզ կեանքը, յիշում են: «Օր  
 բարի կամ դի՛ վայելուչ դի բնակին եղբարք՝ ի  
 միասին», (I) լաւ իմանում են որ նրանց հայրը  
 գիշեր քաց, թեկըր տարածած նրանցէ մնում,  
 արխանում են, շատ դժուարութեանց յալթում են  
 և դառնում են իրանց հայրենիքը: Աղօրմէ ի ծնող-

(I) Սաղ' ճԼԲ Գլուխ I հոմարք 2

քը իրանց օրը կերած մի սօրը գերեզմանումը մահիկ  
են մնում , և ահա՛ յանկարծ Աստուծոյ սպար-  
մնութեան դուռը բացվում է , բազմամեայ պանդխ-  
տացեալ որդիքը դռնից տուննն մանում , վա-  
ղում են վախապանօք , ընկնում են իրանց ճողոպոց  
դիւրիք , հասկումբում են ձեռքերը , զղջման արտա-  
սուհքով լուանում են նրանց սաները և խոտա-  
նում են յաւիտեան անբաժան մնալ իրանց ատ-  
նիցը և միշտ իրանց կենաց վերջը աշխատել . ի-  
րանց խրթնացեալ տունը և աշխարհը բարեզարդել :  
Ահա՛ հիմա է որակաւիան արտասունք թափելու  
ժամանակը : Իսկով՝ ճնողքը ուշաթափ՝ վեր են  
ընկնում և չեն իմանում երանգէ տեսածները  
թէ իսկութիւնս , վաթթվումն իրանց որդիկ-  
րանց վրովը և հազար բերան վառքեր առարե-  
լով առ Աստուած կնքումն իրանց կեանքը :

Այս նմանութիւնը լսելով , ընթերցիչ ,  
կարծեմ փոքր ՚ի շատէ հասկացար միտքս ,  
բայց էլի կ'ուղես իմ պարզ բացատրութիւնս ,  
դիտեա վրա , բու կամքդ հաճելու պատրաստեմ ,  
միայն իմ ասելս և բո լսելդ չոք ու ցանք հե-  
քիաթ չ'դառնայ : Ի ա գիտենք , որ մեզ իրանց  
կողմը բաշոյ բաւեկանները մեզ հասկացնում են ,  
թէ մեր աշխարքը , մեր առն ու տեղը քանդած  
բոլշակ են , մեր սյդիները և պարակղները փշով  
մացառով լքցում , թող նաքա կարծեն ինչպէս  
կամենումն , մենք մեր հայրանիան ժառանգու-  
թիւնը լա ճանանչենք և լա սիրենք . էն ժա-  
ռանգութիւնը՝ որն որ մեր նախնիքներն սուրբ  
օրհնութեամբը մեզ աւանդում և պահում ան

էն ժառանգութիւնը՝ որի գեղեցիկութիւնը հազարաւոր տարիներով մեր նախնիքները քաջ հասկացել են և նրան անմահ պահպանելու համար իրանց անձը զոհել են : Եթէ ամէն մարդու համար իրան հայրական խրճիթը ուրիշների պալատից լաւ է, և փուշը օտարների վարդից անուշահոտ . եթէ Խիկար իմաստունի համար իրան հայրենեաց քարերը Բաբելոնի հնոցներիցը ջերմագոյնք էին, որչափ ևս առաւել մեր հայրական Թանկագին և ցանկալի ժառանգութիւնը մեզ համար : Ընծինջ դրոշմներ ուրեմն մեր սրտի մէջ Միւնեաց Մետրապօլիտ Ստեփաննոս պատմագրի խորին իմաստասիրութեամբ ասածը . « Եւրոպայի իկենցաղս՝ ոչ այլ ինչ, բայց միայն ոնպհական ժառանգութիւն առն՝ յորում ծնեալ և սնեալ լինի և վայելել խորհիցի, որպէս զստինա մօր և զգութ հօր : այնպէս քաղցր Թուեցեալ լինի ՚ի միտս ժառանգորդին, վասնորոյ միշտ կարօտի շրջել տեսնել, զբօսնուլ, խնդամտիլ ՚ի վերայնորա : Եւ յժմ դառնանք բացատրել մեր օրինակը : Յայտնի է ամենեցուն, որ երբ մեր ազգի բարեգուշակ աստղը աղօտացաւ, երբ մեր աշխարհքը սահմանակից նաև հեռաւոր ազգերից ռոնակոխ էլաւ, երբ արքունի Թաղը վերացաւ, երբ հայրապետական գաւազանը տարագիր երկրէ երկիր հալածուեցաւ, էն ժամանակը կացնաւոր ուանկացին այս ընկած ծառի վրա Թափեցան : Վարաւոր ոտիս Յոյնը և խորամանկ Պարսիկը շուտով աշխարհքը բաժանեցին իրանց մէջ, Թաթարները, Իկկերը, Գալալիք և ուրիշ լեռնաբնակ ազգերը

առաջակու թեամբ վեր գցեցին անաէր Հայաստանը , Չ'մնաց թշուառութիւն , որ չ'տեսաւ որորմէլի Մ. յրաչատր , այս վտանգաւոր ժամանակը Հռովմբ քաղաքաց մայրը , փոխանակ քրիստոնէական կարեկցութեամբ վեր ընկածը ոտի կանգնեցնելու՝ սկսաւ Հայաստանի բորբոքեալ կրակների վրայ ձեռքերը տաքացնել : Հռովմայ քարոզիչ Ռենիթուները սկսան Հայաստան մտնել , ոչ թէ ոէր և միաբանութիւն քարողելու , այլ բաժանումն : Իսկո՞՞ Հայերը տանից տեղից զրկած , բարեկամից ազգականից հեռացած , ջուրը ընկած իպէս ծեղի էին ձեռք գցում խեղդելից ազատելու . Մ. յս բուռն նաւակոծութեան ժամանակը այն պատուական քարոզիչներից չէլաւ մէկը , որ սաստէր քառնէրին , մէկի բերանը չ'էկաւ ասել թերա հաւատ ընդէր երկմտեցեր , (1) մէկ յուսադրող չէլաւ , որ ասէր « Մ'ի երկնչի՛ր հօտ փոքրիկ , զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն : » (2) չէլաւ մէկը , որ 'ի համբերութիւն յորդորէր ասելով « Օ՛ր զոր սիրէ Տէր խրատէ , տանջէ զամենայն որդի զոր ընդունի . . . 'ի խրատու համբերութեան կացջիբ , իբրև յորդիս մատուցեալ է 'ի ձեզ Մ. ստուած , » (3) : Մ. յլ ինչ , սկսան ազգի մէջ կրօնական երկպառակութիւն գցել ,

---

(1) Մարտի , Ժ'Ի , 4 շաբաթ 31 համար .  
 (2) Ղ. Գ. Կոմիտաս Ժ'Ի , 4 շաբաթ 32 համար .  
 (3) Մ. Կոմիտաս , Գ. 4 շաբաթ 12 համար . Եւէր . Ժ'Ի 7 համար .

զերութեան մէջ ճշմարտած ազգին սկսան քա-  
րոզել « Թեփրկուիր մի միայն Հռովմայ եկեղեց-  
ւոյ մէջ կը պարտնակի » :

Փրչո-Ռի-ն բառի քաղցր անունով նոր դե-  
րութեան անուրներ անցկացրին իրանց հետեող-  
ներին շէնքը . ամենայն աեղ շրջեցան , ծով և  
ցամաք չ' թողնն , առնել եկամուտ մի , (1) ,  
մինչև որ կարողացան մէկ քանի անխորձ երիտա-  
սարգներ կամ աղքուրաց կրէցներ իրանց կողմը  
գցել , և էն օրից մինչև հիմա նոյն ջանքով աշխատում  
են Հռովմայ « Եւաղաղութիւն ամենեցուն » , ասող հո-  
գեորականները խռովութեան և երկպառակութեան  
հողին զօրացնել ազգերիս մէջ : Եւ ասան նոցա  
չնորհքն է , որ մէկ հօր սրդէքս իրարից բաժանուած ,  
մէկը մէկու թշնամիներ դառել : Բայց էկա-  
հասաւ ժամանակը , որ մեր օտարութիւն գնացող  
եղբարքը իրանց պարզամտութեամբ որսգայթի  
մէջ ընկնելը խմանալով՝ սկսան մերադառնալ ի-  
րանց հայրենի աշխարհը և դիմել իրանց մօր գիր-  
կը , ասելով « Ենձինք մեր ապրեցան որպէս  
ճ'նձըուկ յորողայթէ որսողաց » Որողայթք նոցա  
միջրեցան և մէք ապրեցաք՝ օդնութիւն է մեզ  
յանուանէ Տեառն որ արար զերկինս և զերկիր (2)  
Ասածներիս յայտնի ապացոյցէ անց՝ Վերադարձե  
երկի վարդապետաց Հայոց Սարգոյի , Գաբրիէլէ և  
Մ. Բրտեայ ընդ հովանեաւ լոստաւոր շահան ստրբ անասոց  
Հայաստանեայ Եկեղեցւոյ :

Բայց ընթերցող , երեք թիւը խմանալով ,

(1) Մայ , Ի Գ 420-ի 15 համար :

(2) Մայ՝ Ղ Ի Գ 7 , 8 , 9

շուտով ուսերդ մի թափ տար, տանլով, է՛հ, երեք  
 հոգւով ի՛նչ կրչինի, մի ծաղկով գարուն չի դալ :  
 Արանց պատմութիւնը դիտէ գլուխ ուշադրու-  
 թեամբ կարդա՛, այս երեք հոգու հետ հոգւով  
 միացեալ շատերը կան . այս մէկ ծաղկը  
 գարունը դալու գուշակ է . տես գու այս երեք  
 հալածեալ կրօնաւորներէ հոգւոյ աշխութիւնը  
 և ան ընկձելի աշխատանքը . Արեք հոգին Փարիզու-  
 մէջ աղգային ուսումնարան են բաց աշել :

Մտեաց Աշտնի Աւետարանի Հայաստանի անունով  
 պատուակին լրագիրն (ժողովուրդ) են հրատարակում,  
 մեր աղգին վերաբերեալ նիւթերը գաղղիէոէն  
 թարգմանութեամբ . Իսկ մենք այս քաղաքիս մէջ  
 (Թողնենք շրջակայքը) միայն այս քաղաքիս մէջ,  
 եռեռուն հաղաչից աւելի Հայք, սչ բարեկար-  
 գեալ աղգային ուսումնարան ունինք սչ գաղթեաց  
 և ս՛չ ժողովուրդ աղգային լեզուաւ . Ինչու կարմը  
 ընցար բարեկամ, ինչու ես անկջիդ տակը քորում :

— Ասքեզ յանդիմանելու համար չեմ խօսում,  
 այլ միայն մտքս էնէ, որ իմանաս թէ այն  
 վերադարձեալ երեք վարդապետները քանի մարդ  
 արժեն, և ուրախանաս . Բաց եթէ հարցնես,  
 ինչէ՞ պատճառը, որ այն կողմերը այսպիսի յա-  
 ուաջաղխմութիւն կայ և մեր մէջը չ'կայ : Աս  
 իմ կարծիքով դրան պատճառ կրգնեմ մեր ու-  
 սումնականաց լիտաահ ջանքի, իշխանաց խրախուսի  
 և հարուստների օժանդակութեան պակասու-  
 թիւնը . Թեպէտ անյոյս չ'ենք, որ այս դժուար-  
 ութեանը յաղթելով մենք ուրիշ բանի էլ ձեռք  
 կ'տանք, եթէ մեր յոժարութեանց խաղանարար  
 հանգամանքներ առաջ չ'գան . Այս նիւթիս վերա-  
 խօսիլը Թողնենք ուրիշ ժամանակի և տալի և

պատմեցր . Թէ այս մեր բազմամեայ օտարացած եղ-  
բարց լուրը ի՞նչպէս մեզ հասաւ և ի՞նչ ազդեցու-  
թիւն արաւ ազգի մէջ :

Ընդեալ տարի Յուլիոսի ամսոյն քսան և  
չորսին ժամը տասին ես կամեցայ գնալ մեր ալե-  
գարդ Արբազան՝ Աերսէս Աթուղիկոսի օրհնու-  
թիւնն առնել . ներս մտայ Ահարանի դրսի  
սենեակը , ո՛չ ով չ'կար , որ իմանայի , կարելիէ  
ներկայանալ Հայրապետին , Թէ ո՛չ : Փոքր ինչ  
սպասեցի , ո՛չ ով չ'կայ . սիրտս նեղացաւ , շոք  
պապանակին հեռու տեղեց կ'կած չ'ուղեցի յետ  
դառնալ : Աերջապէս սիրտ արի , իրա նստած  
սենեակի դուռը բաց արի և տեսայ , որ պա-  
տուական ծերը Թղթեր է կարգում : Կրայ հան-  
դէպը կանգնած էին Լջմիածնի Անտղի աստի-  
ճանաւոր Պ . Աերսէսն Վեորդեան Յովհաննեսեանց  
և մէկ տիրացու , տուանց էն էլ արածս անքաղաքա-  
վարութիւն էր , ուստի կարծելով Թէ ինձ չ'տե-  
սաւ , կանց դուրս էլայ : Մէկէլ յանկարծ իրա  
սուր ձէնովը դռնեց , արի , արի , ուրիս գնում , ես  
էս սհաթին քեզ համար մարդ պէտքէ ուղարկէի ,  
արի՛ տես՝ ի՞նչ ուրախական գրեր եմ ստացել , ,  
Ընչիւ և դողութեամբ ներս մտայ , գնացի աջը  
համբուրեցի , և ճշմարիտն ասեմ . որ 1845 Թուից  
դէս , կարելիէ հազար անգամ պատահել էի Ահ-  
հախաւ Հայրապետի մօտ , բայց այնպէս ուրախ  
ամենեւին տեսած չէի : Շատ լաւ , բայց բանն էն  
է , որ ես պատճառը չ'եմ իմանում , հարցնելը ան-  
բաղաբախարութիւն է և անհամբերութեան նշան .  
նա դեռ կարգումէ , ես կանգնած մնացի համարեա՛  
Թէ կէս ժամ :

Կարգաց , կարգաց , մէկէլ յանկարծ ուրախ սրտով ասաց « փառք քեզ , Լստուած , փառք քեզ » : Քանի դնումէք դէմքի վրա ուրախութիւնը փայլում էր . գրեթէ կարգալին տեղտեղ պատուական աչքերը արտասունքով լքցւում էին , էլ ի կրկնումէ , « փառք Լստուծոյ » : Արբազան Կաթողիկոսի հոգւոյ ուրախութիւնը դէմքի վրա տեսնում եմ « փառք , փառք , ասելը լսում եմ , բայց ի՞նչի համար է , չգիտեմ , սիրտ բե՛ր , որ դեմանայ , ի՞նչ պէտքէ անել , փետացած կանգնած ենք , ես էլ , վերոյիշեալ աստիճանաւորը և տիրացուն էլ » : Արջապէս Ժողովից մէքանի նոր բացարած նամակներ և դաստով ինձ տուեց ասելով . « Լս՛ , ան , կարդա՛ և տես , թէ ինչ կ'իմանաս » : Իսկ խորք մեծուէ և իմաստուէ Լս՛ , « Որպէս զի մեծ են գործքք Տէր և յոյժ խոր են խորհուրդքք » : Լս՛ յր անգրամ զայս ոչ ծանխէ , և անմիան ոչ առնու 'ի միտ » : (1) Լս՛ յս խօսքերս ուշադրութեամբ լսելից յետոյ՝ սկսեցի թղթերը կարգաւ կարդալ . Լս՛ աջինն էր Պօրոյեանց սիրեկան աղայի գիրը Լս՛ լեքսանդրոսոյից գրած , որով յայտնումէր , թէ հրդրումից այս թղթերի ծրարը իրան զրկելով , ինդրել են շատ շուտով Արբազան Կաթողիկոսին հասցնել , որն որ նա էլ առաքումէ : Երկրորդ գիրն էր Ղազեղեանց Մահտեսի Յարութիւն աղայի գրածը հրդրումից , որով յայտնում էր թէ Կոստանդնուպոլսոյ Արբազան Պատրիարքը , այս կնքեալ թղթոց ծրարը զրկելով նրան , ինդրել է շատ շուտով հասցնել Արբազնա-

(1) Սողոմոն , ԳԼ , 6 , 7 ,

քեցն Աստուծոյն , զորս և ուղարկումք : Ըն-  
 երկու գրեթէ բան չ'գորս էլու , տեսնենք երրորդը :  
 Երրորդ թուղթն էր գրութիւն Արքազան Յա-  
 կոբոս Պատրիարքին Պօլսոյ , որ իրոյ սրտի լի-  
 ապատար խնդութիւնը յայտնելով երեք վարդա-  
 պետաց Մարգսի , Վարբիելի և Բարսեղայ վե-  
 ղարդի համար ուղարկումք առ նորին Սեհա-  
 փառութիւնը , նախ այն զրի պատճէնը , որն  
 որ երեքեան վարդապետքը գրել են նրան , երկրորդ  
 համառօտ երդման թուղթ ստորագրութեամբ յի-  
 շեալ վարդապետաց , որոյ օրինակն է այս :

« Ըստուածապատիւ Արքազան Հայր :

« Մեք ստորագրեալքս նուիրելով զհաւատակուի  
 « մեր Չերումդ հոգեոր և մարմնաւոր իշխանուե-  
 « ճանաչելք զհանգանակն նիկիական հիմն դա-  
 « ւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ  
 « և զնոյն դաւանելք և մեք առանց յաւելումն  
 « և փոփոխումն 'ի նմա առնելոյ և ոչ միոյ կետի :  
 « Եղնպէս խոստանալք չ'խոստրել երբէք 'ի ծխից  
 « պաշտամանց և յարարողութեանց Հայաստա-  
 « նեայց Յուրբ եկեղեցւոյ ըստ կանոնադրուե Սրբոյն  
 « Գրեթորի Լուսաւորչի , Սրբոյն մեծին Եւրսիսի  
 « և Սրբոյն Սահակոյ Պարթևի Հայրապետաց , և  
 « ըստ ողջամտ բացատրութեան Արքազան Հայ-  
 « րապետին մերոյ Եւրսիսի Դնորհալոյ , որպէս  
 « ընթեռնուելք յ'նդհանրակն գիրս նորին տպեալ  
 « 'ի կոստանդնուպօլիս և 'ի Ս . Պետրբուրգ , և  
 « ամենայն հաւատարմութք զնոյն վարդապետել

« Կուսուցանել յ Լեւեւեան գաղղղին : որ ՚ի Վրաց  
 « ըիզ և ամենայն ուրեք, և ուխտեմք երդմամբ  
 « մնալ հաստատուն ՚ի նսին մինչև ցոահ, ըն-  
 « դունելով զոր ինչ Հայաստանեայց Սուրբ Եկե-  
 « զեցին ընդունի, և հերքելով զոր ինչ նայն հեր-  
 « քէ : , ,

՚ի 15 Յունի 1856 ամի

Սարգիս Սարգսպետ Թէոդորեան : Վաթ-  
 ըիէլ վարդապետ Լ. յվարդապետի : Լ. Երե-  
 սիս վարդապետ Վալֆայեան : ,

Եւ երբորդ Սրբազան Պատարիարդը ուղարկուեց  
 յիշեալ վարդապետաց կնքեալ գրութիւնը՝ գրել  
 առ Սրբազանագոյն Հայրապետն ամենայն Հա-  
 յոց Ներսէս Ե : Լ. յս գրերը կարդում էի ես  
 առ անձին և այս ժամանակը ալեզարդ Հայրապետը  
 ընկզմած էր խորին մտածման մէջ, համարեան Թէ  
 իրան սրտի բերկրութեամբ զմայլած, բայց երբ կարգը  
 հասաւ կարգալ յիշեալ վարդապետաց առ ինքը  
 գրած Թուղթը : յանկարծ քնից զարթնած ի պէս  
 հարցրուց ինձ, այդ ո՞ր գիրն է : պատասխանեցի  
 առ Չերդ Սեհախառութիւնը գրածներն է : «  
 Լ. յդ գիրը բարձր կարգի մէջ էլ իմանամ, այդ  
 գիրը հարկը անգամ կարդալու և լուս կար-  
 դալու գիր է : , , Իսկոյն սկսեցի պարզ և բացայայտ  
 ձայնիւ կարգալ յիշեալ վարդապետաց պատուա-  
 կան գրութիւնը, և իւրաքանչիւր տողը կարդալիս  
 հոգիս փառաւորւում էր : Եւր կարգալը վերջացրի  
 Թղթերը կարգաւ վեր գրի սեղանի վրա և ուրախ  
 սրտով մերձեցայ Սրբազանագոյն Հայրապետին :

բռնեցի աջը և համբուրելով ասացի « աչքներս լոյս՝  
ձեր բազմամեայ օտարացեալ որդւոց և մեր եղբարց  
վերադարձի համար, » : Այս ըոպէին վեհ և սքան-  
չելի էր Արբաղնագոյն Հայրապետի կերպարանքը,  
գլխիցը վեր առաւ քառածայր գաակը, չղբեցաւ  
ճնկան վրա և արտասուելից աչօք ասաց, « Փառք  
քեզ, Արտուած, փառք քեզ, յաղագս ամէն, Տէր,  
փառք քեզ : Փառք քեզ : Արտուած, որ այս  
աւուրս արժանի արարեր զիս : խեղճ մարդիկ,  
անցին նոքա ընդ հուր և ընդ ջուր, և եհան  
զնոսա Տէր 'ի հանգիստ, » :

Այս խօսքերից յետոյ սկսաւ խորհիլ յիշեալ  
վարդապետաց պարզեատրելոյ և խրախուսելու մի  
ջոցների վրա, բայց իմ սիրտս եռէ գալի, էր-  
վում եմ, որ այս սքանչելի եղելու իր կատարում է  
սենեակի մէջ 'ի ներկայութեան երեք անձանց :  
Աս ինդրեցի և ձեռաց դուրս գրեցի վերադար-  
ձեալ վարդապետաց երդման գրի օրինակը. գրի  
ծոցս, կրկին համբուրեցի Արբաղան Հայրապետի  
աջը և Ահհարանից դուրս էլայ :

Ամենօրեայ փորձը հաստատում է բարոյա-  
գիտաց այն ճշմարտութիւնը, թէ մարդս 'ի բնէ  
ընկերական է ստեղծուած. ամ մարդ ազնիւն էլ,  
ուամբին էլ, ուսեալն էլ, տգէտն էլ,  
երիտասարդն էլ, ծերն էլ ցանկանում է հաղորդել  
ընկերին իրա ուրախութիւնը կամ վիշտը. ըստ  
որում այլոց հաղորդելով ուրախութիւնը աւե-  
լանում է և տրտմութիւնը, համարեալ թէ,

փարատվում է : Այս մեր պատուական եղբարց  
վերադարձի ուրախութեամբը զուարճացած գնացի  
ուղղակի Պ. Թամանշեանի քարվանսարայի մօտ  
ուր սովորաբար ժողովում են Թիֆլիզոյ պատ-  
ուաւոր բնակչաց մեծ մասը : Այն տեղ մի երկու  
բարեկամի մօտեցայ և պատմեցի այս ուրախաւթ  
համբաւը , խոկոյն երկուսը դառաւ չորս , չորսը  
վեց , վեցը տասը , վերջապէս տասն ըոպէի մէջ  
ժողովեցաւ մեծ բազմութիւն և մէկամէկուց  
տեղեկացան բանի եղելութիւնը : Ինչպէս մէկ  
սաստիկ երաշտութեան ժամանակ յանկարծ ամ-  
պերի դուրսալը և անձրևի մարդարտաձև շեթերի  
կաթիլը հաղար ու մէկ բերանից դոհութեան ձայ  
ներ է բարձրացնում , այսպէս էլ լսողը « փառք  
քեզ Աստուած , փառք Աստուծոյ ասելով շտա-  
պում էին հոյն լուրը իրանց բարեկամներին հա-  
ղորդելու : Մէկ երկու բարեկամ ուղեցին պատ-  
ուելի վերադարձեալ եղբարց խոստման թուղթը  
կարդալ . երբ ծոցէս հանեցի , դեռ թոյլ  
տուին , որ մի անգամ ես կարդամ , յետոյ  
խլոզ խլոզի էլան , և վերջապէս չ'գիտեմ ում  
մօտ մնաց իմ գրածս : մէկ ժամու մէջ հարե-  
բաւոր օրինակներ գուրս գրեցին , շնորհակալ եմ  
իրանց գրածներից մի օրինակ էլ ինձ տուին ,  
Բանն էս չ'է , խոկոյն սկսան թախանձել զիս , որ ես  
Մասեայ Աղաւի Աւետիքի Հայտարարն . լրագրից  
բերել տամ շատ օրինակներ . որ եթէ ուրիշ  
կերպով չ'են կարող օգնել իրանց սիրելի եղբարցը ,  
այդ ազնուական միջոցով իրանք էլ շահուին ,  
հրանց էլ շահեն , և միանգամայն խնդրեցին  
իրանց սրտի զգացմունքը յայսնեմ աշխարհի կամ  
լրագրերի միջոցաւ կամ ուղղակի իրանց գրելով :

Բայց ես հինգ օրից յետոյ Թիֆլիզից պէտք է  
հեռանամ : ուրեմն այս քաղցր պարտաւորութիւն  
ներքի ոչ մէ'ր չ'եմ կարող կատարել : Այնդրեցինք  
այս հոգսը յանձնառնուլ պատուելի դրախաւսաւ  
Ինֆիւալեանցը : Եւս օրս հինգ շաբթի էր, ան  
ցաւ ուրբաթը և շաբթը, կիրակի առաւօտ մեր  
Արքայան Հայրապետի այցելութիւնը էլ էն չ'են, ինչ  
որ ամէն կիրակի գալիս էին : վեհարանը լքցուցաւ  
ուրախասիրտ բազմութեամբ իշխանաց, ազնուա  
կանաց աստիճանաւորաց և պատուաւոր քաղաքա  
ցեաց : Եւս ներքեան խնդաւթ դիմօք գիւնում են 'ի  
համբոյր աջաց Աորին Ահապատութեան, ասելով  
« աչք Չեր լոյս եղեցի գոհութիւն Աստուծոյ,  
որ ձեր պանդխտացեալ որդիքը կրկին դարձան  
Չեր գիրիք և այլն » : Աւերուին զարմացած էր  
Քաղցել շուտ շուտ աչքերը արտասուքով լքցում  
էին, չ'էր գիտում, նոցա դարձի վրա աւելի զու  
արձանայ, թէ իւր որդւոց հաղեկան միութեան  
վրա : Կարգաց նրանց մօտ վերայ շէտը թիւթերը  
և անդադար փառաւորելով զԱստուած, և առա  
ւել ևս 'իսէր և 'ի միարանութիւն յորդորելով  
արձակեց նրանց :

( Գրոտոսի երկուսին հեռացայ Թիֆլիզից,  
և ուր որ գնացի, այս ուրախական հախաւը  
տարածեցի : Արիւ աւանից յետոյ վերադարձայ  
և ակնայ, որ թէպէտ ժողովրդեան եռանդը մե  
ծոյն է, բայց ոչ յիշեալ վարդապետաց լրագիրը  
ստանալու տնօրէնութիւն կայ և ոչ այս եղելու  
թիւնը հրատարակելու հոգս : Աս էլ աշխարհային  
դժբաղմանց մէջ բնկզմած, մի քիչ էլ ծուլութեամբ

դաշտօրս՝ չ'հարացի այս մասին գրել ինչ և առաջ  
քել Պօլսոյ կամ Օմիւսնիոյ ազգային լրագրեր  
հրատարակչաց կամ նոյն խոյ վերապատուելի վար-  
դապետաց: Մերևի ասածներն ճշմարտութեանը  
հարծեմ: Այս որ չ'ի երկրայր, սրովհետև երե-  
կեան էր դործն և ամենեցուն յայտնի: Մե-  
այն դուցէ հարցանող լինի թէ ի՞նչ է պատճառը  
որ մեր Սրբազան Բահանայապետը ուշացրուց  
յիշեալ վարդապետաց գրի պատասխանը: Ես  
իրև մերձաւոր անձն Նորին Սեհափառա-  
թեան գիտեմ և կը վկայեմ նրա սրախ անչափ ու-  
րախութեանը, և այս բանին վկայ են առ Պօլ-  
սոյ Սրբազան Պատրիարքը և առ Սրբազան Սար-  
գիս Լըբեպիսիոպոսն 'ի Սոսկով գրած գրերը՝  
Նորա խորհուրդը խոր էր և միտքը շատ վեճմ  
այս առարկայն վրա: Բայց վերին Նախահնա-  
մութիւնը իւր անիմանալի խորհրդովը այս տարի  
փետրվարի տասներեքին երջանիկ մահուախը վերա-  
կաշեց զնա առ ինքն. որուն կենաց և երջանիկ մահ-  
ուան պատմութիւնը շուտով ունի հրատարակել  
իմ աղնիւ բարեկամ Սեբայէն Պատկանեանց:

Երբ այս վիճակի մէջ էին բաները և երբ  
սպասում էինք ապագայ հանգամանաց վերադար-  
ձի յիշեալ վարդապետաց, ձեռներս մի տետրակ  
հասաւ մակագրեալ « Պարտութիւն եւ պարտաւ Վե-  
րաբարջի երեց վարդապետաց Հայոց Սարգիս, Պաթ-  
րիէէի եւ Լեբեպիսիոպոսն ընդ հովանեւս շուստորչախն Ստարթ  
Լեւոսոց Հայաստանեայց Եկեղեցոյ: Լ. յ գեղքը  
մեր ուղածն է, բայց ինչ անես, կարգացողը հա-  
ղար, գեղքը մի հատ միայն ու մի ձեռքն է ըն-  
կնում թողնել չ'է կամենում, ուստի ինքնայոր-

261  
261  
261

—ԺԳ—

դոր կամքով ուզեցի յիշեալ տետրակը առանց  
փոփոխութեան կրկին տպել տալ և ճրի բա-  
ժանել. յուսալով թէ իմ դոյզն աշխատութիւնը  
ընդունելի պատարագ կրկնի մեր սիրելի ազգին  
և նոյն իսկ Գերապատիւ վարդապետաց, որոց  
'ի հեռուստ իբրև 'ի մտոյ մատուցեալ զհամբոյր  
սուրբ եղբայրութեան

Մնամ ջերմեռանդն ծառայ  
լըութեան ազգիս

Յալո՞ք վարժապետ  
Վարենեանց:

'ի 25 Մայիսի 1857 ամի  
Թիֆլիզ,

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԼՏՃԱՌԻՔ

# ՎԵՐԵԳՆԵՐԶԻ

ԵՐԻՅ ՎԱՐԳԱՊԵՏԱՅՍ ՀԱՅՈՑ

ՍԵՐԳՍԻ ԳԵՐԲԻՒՂԻ ԵՒ ԼԱՐԻՐՈՍԵՆՅ

ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱԻ

ԴՈՒՍԵՒՈՐԶԱԿԱՆ ՍՈՒՐԻ ԵԹՈՒՈՅ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Լայպիսի ժամանակ մը որ ազգերնիս իբրև 'ի խոր քնոյ արթըննալով՝ աչուրները կրդարձնէ որ պէս միշտ առ Լատուած հարցն իւրոց, և միանգամայն զուարթագին յուսով մը կրնայի առ արշալոյսն գիտութեան և քաղաքակրթութեան, այսպիսի ժամանակ մը որ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ վարատական բայց հաւատարիմ որդիքը աշխարհիս ամէն կողմէն՝ տար սրտով ու վառմբ ունի հոգւով առ նա կրդիմեն իբրև 'ի մի միայն կեդրոն միութեան ազգասէր սրտից, -- այսպիսի ժամանակ մը՝ կրեսմ, որ ազգային եկեղեցւոյ ուղղափառ դաւանութիւնը, և ազգիս Հայոց ընտիր յատկութիւնները օրէ օր աւելի պայծառանալու վրայ են նաև օտար ազգաց առջև, -- ա

մենայն կերպով իրաւացի, օղտակար ա հարեաւոր Իրձանչեանք տեղեակ ընել միւրայնեայ եղբայրները այն ամենայն բարոյսեան և կրօնական շարժմանց և դիպումաց՝ որ շատ և կամ սա՛ռարժանի են իրենց մտադրութեանը, մանաւանդ երբ այն պատահմանց մէջ գանուող գլխաւոր անձինքը մէք ենք, և աչգային օրադիւրք սկսեր են անոնց վրայ խօսել:

Աշխարհիս վրայ գործ մի չենք տեսներ որ առանց պատճառի բոլոր և մինչև որ պատճառը չգիտնանք՝ գործոյն ինչ բլլայն անկարելի է որ ուղղութեամբ հասկրնանք: Աստի զարմանք չեսեսնելն որ շատ մալ գիկ՝ գործողութիւն մը պատահելուն պէս կրդատեն, ու կրդովնեն կամ կրդարտաւեն զայն՝ առաջ պատճառը քննելու, և մեծապէս կրսխալին. հարկ է անոնց սխալմունքը պրջտի որ կարելի է ուղղել՝ գործն ու պատճառը ճշգրտութեամբ մէջ բերելով:

Այս տարի, այս օրերս ալ պատահեցաւ մէկ ազգային գործողութիւն մը՝ շատին մտադրութիւնը դրաւ ող կամ հետաքրքրութիւնը շարժող (ինչպէս որ անցեալ տարի ալ սոյն ատեններս Մարտեան վարժարանին վերջի դիպումները ամենուն խօսակցութեանը նիւթ եղեր էին). այսինքն երկց վարդապետացս՝ երբեմն Մխլթարեանց Հովմայ աթոռոյն իրաւասութենէն զատուելով ելելով՝ սրբոյ Աստուորչին մերոյ աթոռակալ և ժառանգորդ Սրբազան Կաթողիկոսին իրաւասութեանը տակ մտնելը: Այս է ահա աշխարհածանօթ գործողութիւնը: Ի՞նչ է արդեօք այս գործողութեան պատճառը: -- Կրիտութեանք մենք



դալի պարսաւինն արժանի տեսնուեր է :

Տարակոյս չունինք որ մեր համազգի եղբայրները՝ ինչ դաւանանքի տէր ալ ըլլան, կրօնական խօսքերնուս ճշմարտութեանը, և կրնորեն մեզի ցաւալի խորհրդածութիւննը միայն աւելցրնել երկու խօսքով՝ թէ այն է զարմանալին որ այս կրօնական հաւաններն ու բաժանմունքները ոչ թէ ազգիս հեթանոսութեան խաւարին մէջ ընկզմած ստեղծները կը պատահին, այլ քրիստոնէութեան լոյսը արեգական պէս պայծառ կերպով անոր վրայ զարկած ժամանակը, և այն մայր Եկեղեցւոյն մէջ՝ ուր որ շող աստուածեղէն՝ ի Հօրէն լուսոյ ծագեաց, և որոյ որդիքը իրաւամբ կը պարծին իրրեւ որդիք լուսոյ և որդիք տուրնջեան : Բարեւ, այսպէս ուրեմն Մեկաարանն սուրբ, որ աղբիւր է անսպառի սիրոյ և երանաւէտ խաղաղութեան, դորձիք եղեր է նաև մերազնեայց ձեռքը, -- Ինչպէս նաև ուրիշ շատ քրիստոնէայ ազգաց, -- անհաշտ ստելութեան և անդադար կրուող և խառնութեան իրարու դէմ : Կարծես թէ նիւթապէս միայն հասկըցուեր է Քնի Տեառն մերոյ ցաւագին սրտիւ գուշակածը թէ « Աջ եկի խաղաղութիւն արկունել յերկիր, այլ սուր, այլ բաժինս : 1 » Եւ մտածուած թէ այս գուշակութիւնը անոնց համար է միայն՝ որ չուզեն պիտի մտի ընել միւս խօսքերուն թէ « Մանկերն գուք եղբարք էք 2 : Յայսմ գիտասցեն ամենեքեան եթէ իմ աշակերտք էք՝ եթէ սիրելցէք զմե-

1 Մատթ. Ժ, 34. -- Գող. ԺԲ, 51 :

2 Մատթ. ԻԳ, 8 :

մեանս Ի: Իյաղալու թիւն թալուժ՝ ձեզ, զնա-  
զալու թիւն զիմ՝ առմ ձեզ, 2»

Բ

Ե. Ենպիսի խառնութեանց և կրօնական Կախ-  
ներու առաջին պատճառ՝ բանասերիտ սասաննան է  
կրօնն սուրբ գիրք և աստուածաշնորհ փորձու-  
պեսք, և ասոր տարակոյս չկայ: Բայց սասա-  
նային չարութեանը գործիք նվ եղած ըլլալը գի-  
տելու արժանի և մեծապէս խրատ առնելու բան  
է: Մենք զայս գիտենք ու կրհատաատենք որ մեր  
ազգին մէջ կրօնական վէճեր ու երկպառակու-  
թիւններ սերմանողները թէպէտ օտարք եղեր են,  
բայց այն չար սերմանքը աճեցնողները եղած են  
միշտ ազգայինք ոմանք:

Եւ նախ սրբոյն Սահակայ օրերն մինչև Ենթ-  
հալի հայրապետին օրերը ազգիս մէջէն շատ մար-  
դիկ կամոյ և տկամոյ Յունաց տերութեանն ու  
անոնց Եկեղեցւոյն կարնը բռնելով՝ անթիւ ա-  
նիրաւութեանց ու աստապանաց պատճառ եղան  
ազգային անմեղ Եկեղեցւոյն առաջնորդացը:  
Յաւազին սրտով դանգատ կրգրէր սուրբն Սա-  
հակ առ կայսրն թէպէտ թէ «Ոչ հանդիպե-  
ցայ ընդունելութեան յիժամ Վիճալիս (որ 'ի  
բաժնին Յունաց) 'ի հրամանէ վերակացուացս  
սոցա»: այնչափ ատեցեալ զմեզ՝ մինչև զնշա-  
ւնադիրս անդամ ոչ ընկալան զորս երբեր նոյն այր

1 Երկ. ԺՂ, 31:

2 Երկ. ԺՂ, 27:

« (սուրբն Մեսրոպ) 1 » - Արքողոքէր և Շնորհալին եօթը հարիւր տարի ետքը առ Մանուէլ Առաքել թէ « Չերդ եկեղեցական դասք և առ « միկ ժողովուրդք իբրև զարդարութիւն ունին և « զաստուածային պատուիրանաց կատարումն , և « զարքայութիւնն երկնից ժառանգելոյ բաւական « պատճառ՝ զատեն զմեզ և զհայհոյեին . . . (և « այս բազում անգամ ) 'ի զըպարտութենէ զոր « ատելութիւնն ծնանի և 'ի ստարանութենէ « ոճանց աներկեղից 'ի մէջ առ թեզ հոտոածելոց , « և զմերս աղարտելով կարգաւորութիւն 'ի հա- « ճոյս ձեր կարծելով 2 : »

Արան հարիւր տարի հազիւ թէ անցեր էր , յատինացիք սկսան այնպիսի քարոզիչներ զրկել Հայաստան որ իրենց տղիտութեամբն ու անխոհեմ նախանձայուղութեամբը տակնուվրայ բրին մեր ազգին ներքին և արտաքին հանգստութիւնը : Բայց անոնց ալ ըրած մնասնեքը այնչափ չէին մեծնար՝ թէ որ իրենց խռովարարութեանը յարմար գործիք չգտնէին Վարսենցւոյն պէս , Բըսնեցւոյն պէս , Ներսէր Պաղտնցին պէս , Սիմոն Բէկին պէս , մէկ խօսքով՝ Ունիթօռաց և անոնց յաջորդ և հետևող խումբ խումբ հռովմէական քարոզչաց պէս աղգատեաց մարդիկ , որ մուրչը մնաց որ չբքսեն Հայաստանեայց եկեղեցւոյ աւնարատ վարդապետութիւնը վրայ , որպէս զի իրենք

1 Իւոբէն . Գ . , 57 .

2 Ս . Ներս . Աւայ . Պատասխանի տասնչին Ռդիւոյ Ռատուորին Հոտոճոց Մանուէլի :

միայն ուղղափառ ճանչցուին օտար սոցիալ առջև,  
և անսոցմէ պատիւ գանան իրրև ճշմարտասէր ան-  
ձինք :

Գ.

Գետեն արդէն ընթերցողք թէ Սենետոր  
Մխիթարեան միարանու թիւեր ինչ պարագանե-  
րէ ստիպտ ամ' և ինչ կերպով 1854 ին նոր յայ-  
տարարութիւն կամ դաւանանք մը օտուտ պա-  
պական ակթուոյն : այն դաւանութեան մէջ կրսէին  
Մխիթարեանք թէ « Հռովմայ Եկեղեցւոյն իշ-  
խանութենէն բաժանեալ Հայերը արտաքոյ են  
ճշմարիտ Եկեղեցւոյն Քրիստոսի » : Եւ որով-  
հետև շատ մը հռովմէական աստուածաբանից խօս-  
քին նայելով՝ « Երտարոյ Եկեղեցւոյն Հռովմայ  
չէք փրկութիւն » -- որ թէ որչափ անսոցի զուր-  
ցուածք է՝ շատոնց հասկրցած են ողջամիտ աս-  
տուածաբանք, -- ուստի Հայոց Եկեղեցւոյն ան-  
մեղ որդիքն ալ փրկութենէ անյոյս և արքայու-  
թենէ զուր' պիտի սեպուէին այնուհետև նաև  
Մխիթարեանց վկայութեամբք :

Եւ ահա այնպիսի դաւանանքի ձեռք դնել  
չուզող Մխիթարեանց գլխաւորներն եղանք մեք  
երեքին վարդապետքս որ 'ի Փարիզ : ուստի և  
յանձն առինք մեր կարծեցեալ անհնազանդու-  
թենէն առաջ գալքք ամենայն հալածանքները,  
թշնամանքներն ու աստապանքները, որ փոքր 'ի  
շատէ գրուած են արդէն տպագրեալ Յայտարա-  
րութեան մէջ : Կարծեցեալ անհնազանդութեան  
ըսինք՝ ոչ միայն անոր համար որ հաստատութիւն  
դրած ենք մարբրնիս թէ « Հնազանդել պարտէ

Մտաւ ծոց առ առեւելք քան մարդկանս Ի, » այլ և  
անստ համար որ համոզուած էինք և ենք թէ այն  
դու անու թիւնը աղբիւրն էր կերպով որու ամ էր  
և ու և բոս սահմանադրութեան Միսթիթարեանց .  
ու առի անսր ձեռք չընողը և ոչ կրօնաւորական  
հետազոտութեանը դէմ գործ մը բրած պիտի հա-  
մարուէր :

Դ

Մտոյդ գիտէինք յայլմէ կողմանէ թէ այս  
պիտի բաժնութեան մը փոխարէն ուրիշ բանի չէ-  
ինք կրնար սպասել աղբային և օտարազգի առաջ-  
նորդներէ՝ բայց եթէ նեղութեան և հալածանաց .  
սակայն կարծեցինք առջի բերան թէ դուցէ Մը-  
թիսթարեան միարանութենէն զտուելնիս բաւա-  
կան ըլլայ զմեզ այն հալածանքներէն ազատ սղ-  
հելու : Եւ անշուշտ ալ ազատ կրմնայինք՝ եթէ  
ուղէինք մենք ալ այն միարանութենէն առեւտր  
զատուած ուրիշ բանի մը անձանց պէս ինքզինք-  
նիս յանդործութիւն դատապարտել, և գրեթէ  
սղջ ուղջ թաղուել : Բայց մեր միտքը այն չէր ա-  
մենեւին, և այն չէր կրնար ըլլալ : Խեղճերնիս  
միտքերնիս այս էր որ՝ զոնէ անադան՝ մեր խղճին  
ժրհայած ճշմարտութեան կրցածնուս չափ հզա-  
տակինք . այս ինքն Հայաստանեայց Ակիզեցոյ  
ուղղափառութիւնը աներկիւղ հռչակներ ու ջա-  
տապովինք . և Հայոց աղբիւ մանկուները առանց  
հոյրեմանաւոր ուղիղ հաւատնին ուրացնելու հը-  
բահանգներ ու կրթներ :

Աղան այն միջոցին շատ մը խոհական անձինք՝ ոչ միայն մեր ազգէն, այլ և օտարներէն, որ ըսին մեզի թէ « Լ'Ենհարին է որ կարենաք այդ ձեր վախճաններուն հասնիլ՝ քանի որ Հռովմայ աթոռոյն տիրապետութեանը հպատակող առաջնորդաց իշխանութեան տակը մնաք »: Մեր խիղճն ու փորձառութիւնն ալ կրօնայէր անոնց խօսքին ճշմարտութեանը, և զանազան ապացոյցներն ալ օրէ օր տեսնելու վրայ էինք. բայց մէկ կողմանէ դրեթէ յոգնած ու ձանձրացած էինք մեր վերայ խօսիլ տալէն ազգայնոց և օտարաց. մէկալ կողմանէ ալ մեր ազգասիրութեանը ուզածին չափ ալ չըլլայ նէ՝ մեր կարողութեանը համեմատ չափով աշխատանք որ գտնէինք ազգերնուս օգտին համար, անով գոհ ըլլային աւելի կուզէինք՝ քան թէ մեծամեծ գործողութեանց ձեռք զարնել:

## Ե.

Են ղգացմանց մէջ էինք ահա երբոր տպագրեցինք Մուրատեան վարժարանին վերջի դիպուածներուն պատմութեանը 222 երեսին մէջ այս խօսքերս թէ « ուղղափառ հայ վարդապետներ ենք « մենք՝ Հռովմայ սուրբ ընդհանրական և առաջ « քերական Արքեպիսկոպոս վարդապետութեանը հե- « աւողք 'ի հո-սոսոս » , Աւ նոյնպէս պիտի ըլ- « լանք մինչև ցմահ Աստուծոյ շնորհիւր : » (Յայտնի բան է թէ այն խօսքին մէջ 'ի հո-սոսոս ըսելով՝ մեր միտքն էր հո-սոսոս էական մասունքը միայն հասկընալ, և ոչ երբէք այն անիրաւ և անտեղի նորաձեւութիւններն որ Հռովմայ աթոռոյն հպատակող աւտուածաբանները կուզէն իբրև:

Հաւատոյ մասունք ընդունիլ տալ տգիտաց, ինչ-  
պէս են Պապին գերագոյն իրաւասութիւնը՝ ի  
վերայ ամենայն Ակեղեցեաց՝ իբրև մի միայն վե-  
րանորդ Վրիտանոսի, անոր անսխալութիւնը, ը-  
հանուր ժողովէ մը աւելի մեծ իշխանութիւն ու-  
նիմ ըսելը, սր և իցէ աստուածարանական աս-  
նորոշ ինդիր կամ կարծիք՝ իբր անձնական հեղե-  
նակութեամբը կամ թէ մասնական ժողովով իբ-  
րև մասն հաւատոյ հաստատելը, և անոր դէմ  
խօսալները հերետիկոս ու հերձուածող են ըսե-  
լով գատազարտելը, և այլն և այլն: Սակայն կը-  
խոստովանինք որ ամենայն կերպով իրաւունք ու-  
նէին այն համադրիք որ կարծես թէ մտքերնին  
գրեթէ էին որ մենք իբր թէ արդէն դարձեր մը-  
տեր ենք նորէն Հայաստանեայց Ակեղեցւոյ ա-  
ռաջնորդաց իշխանութեան տակը, ուստի և տես-  
նելով թէ ոյն մեր դաւանութիւնը ուրիշ դատա-  
կան վարդապետաց դաւանութենէն տարբե-  
րութիւն մը չունի՝ դայթակղեր ու վըշտացեր էին:  
Այն միջոցին համար սխալ էր կարծիքնին. բայց  
և հարկ չհամարեցանք դրաւոր պատասխան մը հը-  
րատարակել իրենց մեղադրութեանը դէմ: Իսկ  
հիմա որ փոխուեցաւ վիճակնիս, պարտք կը հա-  
մարինք մեզի քիչ մը աւելի բացատրել՝ թէ ին-  
չո՞ւ համար կամ ի՞նչ մտքով Հոռոմոյ անունը  
մէջ բերինք հոն, և թէ հասարոյ հակառակ Տասնոր  
ըսելով ի՞նչ կը հասկընանք հոս:

Ք:

Այն Յայտարարութիւնը դրած ատեննիս ի՞նչ  
վիճակի մէջ էինք մենք. -- ամբաստանութիւն չը-

կար որ չընէին վրանիս անոնք որ իրենց անլուր  
 դործողութիւնը արդարացնելու կարօտ էին՝ մեր  
 վրայ մեծամեծ յանցանքներ շինելով . այսինքն ան-  
 հընազանդութիւն, ապստամբութիւն, անհաւատարմութիւն,  
 յանդրգնութիւն, խռովարարութիւն, և այլն և այլն . Ռայց  
 որովհետեւ եկեղեցական անձինք էինք՝ Վաղղիոյ  
 պէս կաթողիկ երկրի մը մէջ մինչև այն օրերը,  
 Կաթողիկ ճանչցուած, ուստի և իբրև բովանդակու-  
 թիւն այն ամենայն անբաստանութեանց այս խօսքս  
 հասնել էին մեր վրայ որ իբր թէ մերք հաւատոյ  
 վարդապետութեան մէջ ալ կատկածելի ենք, ան-  
 տարբերեայ ենք, նոր պարտք մը հնարելու ետեւէ  
 ենք . անոր համար կառմախիան իշխանաւորաց և  
 Փարիզու Վերապատիւ արքեպիսկոպոսին ոչ մի-  
 այն պաշտպանութեանը արժանի չենք, այլ և  
 ոչ դժուրութեանն ու կարեկցութեանը . պէտք է  
 որ քունինք հալածութիւնք Վարիպէն, և եթէ կա-  
 ընելի է՝ բոլոր Վաղղիպէն, և աշխարհիս երեսէն .  
 Վարձեալ և այն հառմէական ծնողք որ իրենց  
 զաւկրներուն դատարարալութիւնը մեղի յանձնել  
 էին տարիներով, և կատարեալ վստահութեամբ  
 այս անբաստանութեանց վրայ ուրիշ ամէն բանէ  
 աւելի դայթակրելով՝ կերպով մը իրաւունք կու-  
 տային զմեզ չարչարողներուն .

Լ

Ենպիսի պարագաներու մէջ, և քանի որ  
 դեռ հառմէական առաջնորդներուն լուծը թօթ-  
 վելու որոշ դիտաւորութիւնը չունէինք, Հառմէայ  
 Լ կեղեցւոյն անուանը տակ դէթ առ ժախննայ  
 մէ պատասպարութիւնը հարկուող սեպեցինք՝ գրեթէ

նայն իմաստով որով երբեմն և սուրբն Պօղոս իր  
կեանքը վերցընելու ուղղով թշնամիներուն դէմ  
բողոքեր էր թէ Հասովճայեցի եմ. ուրիշ անգամ  
մըն ալ աղաղակեր էր թէ Փարիսեցի եմ, և  
այնպէս անոնց անիրաւ բռնու թիւններէն առ ժամն  
ազատեր էր 1: Թաւրեւս աւելորդ է ըսելը թէ  
Մաւրելոյն խօսքին մէջ ոչ ստու թիւն կար և  
ոչ կեղծաւորութիւն. քաւ լիցի. վասն զի իրաւ-  
ցընէ ալ ըստ Կաղապարի իրաւանց Հոովմայեցի գըր-  
ուած էր, և ըստ նախնայնոցու լեւոն Տովմայեան  
օրինաց՝ Փարիսեցի: Օարմանք չէ ուրեմն թէ որ  
մենք ալ հոովմէական հայ ըլլալնիս մէջ բե-  
րինք՝ սմէն բանէ առաջ այս ցուցընելու մտքով  
թէ մենք նոր աղանդ մը հնարել ուղղով մարդիկ  
չենք, և թէ բողոքական (փրօթէսթանթ) անունը՝ որ  
սկսեր էին ոմանք դնել մեր վրայ նաև 'ի Պօ-  
ղոս՝ չենք ընդունիր ամենեւին, այլ եմք վարդա-  
պետք և որդիք Սիւնոյ, Սուրբ, Աթուղիէի և Մ-  
ասիէլայի Ակեղեցւոյ:

Իսոյց որպէս զի չկարծուի թէ նորազանդից  
չատերուն սէս՝ մենք ալ մտացածին Ակեղեցւոյ  
մը կը յարմարցընենք այդ մակդիրները, Հասովճայ  
անունը յառաջ բերինք՝ քանի որ հարկ և խո-  
հեմութիւն չէինք համարեր անոր տեղը Հայաս-  
տանեայց Ակեղեցւոյ անունը տալով՝ մեր թշնա-  
մեաց կիւրքը զայրացընել, և անոնց ըրած զրպար-  
տութիւններուն մեր բերնովը ոյժ տալ: Սըտ-  
քերնիս ալ դրած էինք թէ ասոր վրայ շատ չեն  
դայլթակղեր մեր համակրօն եղբայրները. վասն զի

գիտելինք թէ ոչ երբէք ժխտելու են նաև իրենք  
թէ Հռովմայ Արևելեցին ալ արժանի է ամենայն  
մեծարանաց՝ որպէս և իրենց սեպհական Հայաս-  
տանեայց սուրբ Արևելեցին: Եւսով մենք ալ պի-  
տի չմեղադրուէինք խօսք հասկըցող ու արդարա-  
սէր անձանցմէ՝ թէ ինչո՞ւ համար Հռովմայ Արև-  
ելեցաւն վարդապետութեանը հեփնոզէ են: Ի հասարակ  
ըսեր ենք՝ վերոյիշեալ պարագաներու մէջ գրա-  
նուելով:

Ը:

Յիշեցինք վերը նաև այս հարկաւոր գիտելիքը  
թէ ՚ի հասարակ՝ այսինքն հասարակ բանչումն մէջ  
ըսելով՝ քրիստոնէական ուղղափառ հաւատոյ հո-  
գան Տառննիք միայն կը հասկընայինք և կը հասկընանք,  
և ոչ եթէ աստուածաբանական մութ ու բարակ  
խնդիրները, եկեղեցական բարեկարգութեան զա-  
նազան ճիւղերը, արարչութիւնները, ծէսերը,  
սովորութիւնները և այլն, որ հաւատոյ իսկու-  
թեանը ամենեւին վիսս մը չեն ըներ՝ որչափ ալ  
տարբեր տարբեր ըլլան իրարմէ՝ ըստ աւանգու-  
թեան զանազան աղգաց և եկեղեցեաց ուղղափառ-  
քրիստոնէից: Ինչ հոգիանձամբ հասարակ ըսելով կը-  
հասկընանք, -- ինչպէս որ պէտք է հասկընայ նաև  
ամենայն հաւատացեալ քրիստոնեայ, -- Արևի-  
կան հանգանակը, այսինքն Հասարակը, և այն  
ամենայն բացատրութիւնները որ տրուած են ա-  
նոր՝ հասարակոյ ընդունելի սուրբ և տիեզերական  
ժողովներէն, և մեր մէջ մասնաւորապէս ՚ի սրբ-  
բոյն Արքայի Ալայեցոյ, և իրեն շնորհալի ու  
խաղաղասէր հոգւոյն հետեոյ և ժողովներէն:

Հայրապետներէն ու հմուտ վարդապետներէն՝ մինչև մեր օրերը:

Իսկ արդ այս հասարակ էակն Տոսանց վրայ Հռոմվայ եկեղեցւոյն ունեցած բուն վարդապետութիւնները ինչ տարբերութիւն ունին Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետութիւններէն. -- սպարէն և ոչ ինչ, -- ինչպէս շատ անգամ ասացոյցներով հաստատուած է. անոր համար ալ է որ մեր ազգը իրաւամբ կրգրծուարի՝ երբոր Յոյնք և Հռոմվայեցիք Հերքիտ, Հերչո-ածող, Մարտալքսելով կրնախասեն զինքն ու իր ուղղափառ եկեղեցին, և շեն ուղեր ճանչնալ թէ անոր հասարակ էակն Տոսանց մէջ ունեցած վարդապետութիւնները իրենց վարդապետուեցը հետ բոլորովին համաձայն են:

Ըստ է ահա այն մեր սպառնութեամբ հրատարակած անորոշ դաւանութեան անկեղծ և ճիշտ բացատրութիւնը. որով յուսանք թէ բնական կերպով մը անկեց գայթակղեալ եղբարց միտքը կրթշիւի:

Տեսնենք հիմա թէ ինչ առիթով հարկադրեցանք փութալու, և այն մեր կեղակարծ վիճակէն ալ ելլելով՝ բոլորովին Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ հոյուաց և առաջնորդաց իրաւասութեանը տակ մտնելու:

Թ.

Ըստ տարի սպրիլ ամսոյն մէջ մեզմէ Միքրոսէոս վարդապետը գնաց ՚ի Կոստանդնուպօլիս. հոն առաջին օրերէն ստուգեց անժխտելի սպացոյցներով որ շատ մը հռոմվական առաջնորդներ միտքաներ են մէջերնին՝ մինչև ՚ի սպառ հա-



լածելու զմեզ, և մեր ամենայն ձեռնարկու թիւն  
ներք յօգուտ մեր ազգին և եկեղեցւոյն՝ փճա-  
ցընելու:

Եւ յն ապացոյցներուն մէկն ալ այս էր որ Փա-  
րիզու Վեր. արքեպիսկոպոսը հարկ սեպեր էր  
դրուլ խոստանալ Հռովմայ աթոռոյն թէ « Սար-  
դիս և Լիբրոսիոս վարդապետաց իրենց քահա-  
նայական պաշտօնը կատարելու հրաման պիտի չը-  
տամ իմ վիճակիս մէջ՝ մինչև որ իրենց մեծա-  
ւորին (Վ. Հիւրմիզեանին) Հնադանդին, Եւ-  
որովհետև այն վարդապետները հաստատութեամբ  
դրած էին մտքերնին թէ Վ. Հիւրմիզեանին  
հնադանդութենէն անդառնալի կերպով ելեր են  
ըտել կրկնաբ թէ քանի որ իրենք Փարիզու Վեր.  
արքեպիսկոպոսին վիճակին մէջ մնան՝ քահանա-  
յական պաշտօն կատարելէն յոյսերնին պիտի կրա-  
րեն: Գարձեալ, այս խոստմունքն ալ բեր էր որ  
« Լ. յուհետև որ և իցէ հայ քահանայի հրաման  
պիտի չտամ իմ վիճակիս մէջ պատարագ մա-  
տոցանելու՝ մինչև չխոստանայ որ կերչոտմողոց  
հետ հաղորդակցութիւն պիտի չընէ ամենեկին՝ ի  
հողերս: » Բսել կրկնաբ թէ անոնց միայն հը-  
րաման պիտի տամ իմ վիճակիս մէջ քահանա-  
յութիւն ընելու՝ որոնք որ եթէ յուսաւորչա-  
կան հայ մը խոստովանընել ու հաղորդել պիտի  
բլլայ՝ առաջ կամ ետքը հայութիւնն ուրացը-  
նեն անոր:

Ժ.

Եւ որ անկողմնասէր ընթերցողները կրտսենեն  
անշուշտ յայտնապէս թէ մեհր երեքնիս որ ար-

դէն այսպիսի հրամաններու մտիկ ընել չուզելուս համար զատուեր ելեր էինք Մխիթարեան միարանութենէն, և միանգամայն « Հայոց հետ հարգողացութիւն պէտք չէ ընել 'ի հոգևորս » քողներուն դէմ կեցեր էինք, զարմանք չէր որ աճապարէինք այնուհետև քաշուելու հեռանալու բոլորովին Հռափնայ Եկեղեցիէն ու անոր առաջնորդներուն իշխանութենէն, և մեր ազդային անարատ Եկեղեցւոյն օրինաւոր և սեպհական առաջնորդաց հովանաւորութեանն ու իրաւասութեանը տակ պատասպարելու: Եւ ահա այնպէս ալ ըրինք, ու երեքնիս միարան հպատակութեան գրեր գրեցինք սուրբ Լջմիածնի աստուածարեալ Աթուղիկոսին և Կոստանդնուպօլսոյ սրբազան Պաարիարքին: Եւ որովհետև նախ սուերկրորդն գրեր էինք մեր հպատակութեան զիրը, առաջ անոր օրինակը դնենք հոս:

« Եւմենայատիւ Արքազան Տէր,

« 'ի հերուն հետէ խի քաջածանօթ է Արք.  
« բութեանդ անճնանուէր նահատակութիւն եւ  
« ընցունցս ներքոյ գրեալ վարդապետաց, երբեմն  
« Մխիթարեանց՝ և զարդիս կամաւորապէս ան-  
« ջաատելոց 'ի միարանութենէ անտի, 'ի պաշտ-  
« պանութիւն իրաւանց Լ. գգիս մերոյ և 'ի ջա-  
« տագովութիւն ուղղափառ վարդապետութեան  
« Հայաստանեայց Եկեղեցւոյ: Տեսեալ արդ-  
« յայտնապէս 'ի միոյ կողմանէ զանսպառ և զա-  
« նիրաւ հալածանան յարուցեալս 'ի վերայ մեր  
« յօտարախորթ առաջնորդաց, և լուեալ 'ի միւս-  
« մէն հաւատեալս եթէ Լ. գգն մեր մտադէպը

« յօժարութեամբ կամօղի օգնական լինել մեզ  
« քանիւք և արդեամբք յուսումնական և 'ի բա-  
« րոյական զարգացումն մերաղնեայց, և թէ առ-  
« այս կարօտի միայն երաշխաւորութեանս Մ. մե-  
« նապատիւ Տէրութեանդ Չերոյ՝ որպէս զի ա-  
« ներկմտ վստահութեամբ յանձնեցէ 'ի մեզ  
« զինամն դատարարակութեան որդւոց իւրոց,  
« յոյտ առնեմք ահա սովին գրութեամբ, զի  
« եթէ արդալե հաւանեալ իցէ և Չերդ Արք-  
« բութիւն օգտակարագոյն ևս գործել անպակ-  
« ցացն մերոց զվստատիս մեր դուրնաքեայս՝ յոր-  
« ժամ ընդ Չերովդ պատասպարկելմբ հոգևորա-  
« կան իշխանութեամբ, մեք մերովսանն պատրաստ  
« եմք 'ի սոյն, հրաժարելով 'ի սպառ 'ի հոյա-  
« տակութենէս մերմէ առ Պատն Հռովմայ և  
« առ առաջնորդս կարգեայս 'ի նմանէ:

« Այլնչ երկրայեմբ, Մ. մենապատիւ Տէր, եթէ  
« Չերդ խոհական իմաստութիւն շատ գրեցէ  
« զյայտարարութիւնս մեր զայս՝ առ 'ի կալոյ  
« երաշխաւոր ողջմտութեանս մերում անաջի ոյր  
« ուրուք և իցէ, որպէս և հաստատելոյ զմեզ  
« յիշխանութեանս զոր ունիմք օրինաւոր ձեռնա-  
« դրութեամբ 'ի կատարումն քահանայական և  
« վարդապետական պաշտամանոց: Աս զի և խոս-  
« տանամք ևս կատարել զնոսին այսուհետեւ ը-  
« անխառն արարուլութեան և ընտ հարսնդատ ա-  
« ւանդութեանց Հայաստանեայց առաքելական  
« սուրբ Ակեղիցւոյ, զորոյ զվարդապետութիւնան  
« և զպաշտամունս առ հասարակ ուղղափառա-  
« կանս ծանուցեալ եմք միշտ և ճանաչեմք, և  
« ջատագով կա՛նք նոցին և կացուք Տէրամբ մին-

« չե՛ ՚ի վախճանն բանիւ և գրով :

« Լ՛կն ունեւոր զօրհնաւաք պատասխանոյ Չե՛  
« բումի Սրբութեան, խոնարհիւք ՚ի համբոյր աս  
« տուածարեալ աջոյդ, և մնամք

« Լ՛մենապատիւ Տէրութեանդ

